

ունեցած ուրախական վստահութիւնը և ընթերցելի միջոցին իւր դադաթնակէտին հասել: Այդ վերջին ձիգն էր փորձութեանս որից Նա ազատ չ'ը հեղեկ երբեք կհանքումս: Բայց մենք պատկառում ենք այդ վսեմ՝ բոլորէն մանրամասն քննելուց: Մենք գիտենք, որ մեր լեզուն բառեր չունի նորա խորհուրդը բացատրելու համար: Եւ ինչպէ՞ս կարող ենք մենք ամենափոքր չափով իսկ զգալ և գնահատել այն՝ որ զլիաւոր կէտն էր այդտեղ՝ ամբողջ աշխարհի Նորա վերայ ծանրացող մեղքի ճշշումը, որ պէտք է քաւէր Նա:

Սակայն մաքառումը կատարեալ յաղթութեամբ վերջացաւ: Մինչդեռ թշուառ աշակերտները քնով էին անցրել զալիք օրհասի նախապատրաստութեան ժամը: Նա ինքը բոլորովին կազմ ու պատրաստ էր: Նա յաղթել էր փորձութեան վերջին խրատումներին, անցրել մահուան դռնութիւնը, և կարող էր այժմ յառաջ քայլել բոլոր պատահարների հանդէպ՝ անվրդով խաղաղութեամբ և այնպիսի վեհ արժանաւորութեամբ, որ Նորա չարչարանքն ու խաչելութիւնը մարդկային ազգի պարծանքն է դարձնում: *



ՅԻՍՈՒՍ ՀԱՆԳՈՒՅԻՉ.

«Եկայք առ իս ամենայն վաստակեայք և բնուաւորք, և ևս հոնցոցից զմեզ. առէք զյուծ իմ ի մեզ և ուսարուք յինկն, զի ևնգ եւ ևս խնարհ սրտիս, և զգրիք հանգիստ անձանց մերոց. զի յուծ իմ քաղցր է, և բնու իմ փոքրոցիք:»

Մատթ. ԺԱ. 29—30.

Մ

ԵՐ կեանքի գրեթէ բոլոր կարևոր հանգամանքներում մենք եկեղեցի ենք զիմում, եկեղեցւոյ սրբազան խորհուրդներով նուիրադործում մեր արարքը. եթէ վշտի և նեղութեան մէջ ենք՝ եկեղեցւոյ բնմից ելած խօսքը մեզ մխիթարել և խրախուսել կարող է, եթէ ուրախութեան և յաջո-

ղութեան մէջ՝ ուղիղ, աստուածահաճոյ ընթացք տալ մեր զգացումներին ու մտքերին, ամբարտաւանութիւնից հեռու պահել, ամեն բարիք իրրեւ Աստուծոյ կողմից անարժանապէս ընդունած պարզեւ նկատելու և ամենայն երկեղածութեամբ զոհանալու վարժեցնել: Սակայն ամեն դէպքում մենք հաւատար կերպով չենք կարիք զգում եկեղեցի զիմելու և Աստուծոյ խօսքը լսելու. շատ անգամ կրաւակահանք զուգէ կեանքի սովորական կանոններով և սովորանք ու քաջախելութիւն մեր անմիջական շրջապատի մէջ կգտնենք. մի վիճակ կայ յամենայն դէպս, ուր մեր շրջապատը և նորա հետ ունեցած ոչ մի երկրաւոր կապ մեր ներքին պահանջներին բաւականութիւն տալ չէ կարող:—Երբ մի ահագին հոգս մեր սրտի վերայ ծանրանում է կամ այնպիսի դառնութիւն համակում նորան, որ մեր ձեռքից իսկ փախչել ծովը նետուել կամ օդի մէջ կախուել կկամենայինք, որ մեր վերքը ոչ ոքի առաջ բանալու հնարաւորութիւն չունինք՝ չենք տեսնում ոչ մի բժիշկի, որ նորա մէջ թագնուած ցաւը հասկանար, վրան սպեղանի գնելու, կամ կարել հանելու հնարըն իմանար... տաքնապի այդ ժամին, երբ մենք վանդակի մէջ փակուած առիւծի նման զայրանումս կամ ծուղակն ընկած անզօր թռչնակի նման կծկուում ենք, վհատում և մէկը չկայ, որ մեզ ազատութիւն հանգիստ շնորհէ, մեր հոգու վերայ ծանրացող անտանելի բեռը բառնայ՝ ս. Եկեղեցւոյ բեմի վերայից իւր մօտ է կանչում մի մեղմ հոգեպարար, երկնային ներդաշնակութեամբ հնչող ձայն, աշխարհի Փրկչի հանդուցիչ ձայնը՝ «Եկայք առ իս, եկ և դու, եկէք ամենքդ, որ հոգեկան ցաւերի բեռան տակ ճնշուած էք և վաստակած, Ես ձեզ կսովորեցնեմ թէ ուր պէտք է հանգիստ ու թեթեւութիւն գտնէք, ցոյց կտամ ապալթէ ինչպէս կգտնէք ձեր հանգստութիւնը, կբացատրեմ նաեւ զաղանիքն այն ամենարուժ դեղի, որ ձեր ցաւերը միշտ ամբողջ կարող է և թոյլ չտալ որ նոքա տեղ ու ճարակ գտնեն ձեր սրտում... «Եկայք առ իս...»

* Թարգմ. Rev. J. Stalker, The Life of Jesus Christ գրքից. տես. Ամարտ, փետր. 1898 թ.

Այն, ուրիշ ուր, եթէ ոչ Նորա մօտ միայն, որ անարուեստ բժիշկն է բոլոր հի-

ւանդութեանց, բոլորի ցաւերը իւր վերայ վերցնող Աստուծոյ անարատ գաղտնիքը—Մինչ մանուկ էինք՝ ամեն անգամ երբ մեր մի մատը ցաւում էր, գորովագութ մեր մօր զիրկն էինք վազում այնտեղ բժշկութիւն և սփոփանք որոնում։ Երբ մեզ մի բան պակասում էր կամ մի վտանգ մեզ սպառնում, ամենակարող համարած մեր հօր թիւի տակն էինք մտնում և պաշտպանութիւն գտնում։ Իսկ երբ հասակ առանք՝ մօր գութն ու սէրը մեր բոլոր ցաւածներն այլ ևս չեն բուժում։ Նոցա խորքը թափանցել և զարման տանել չեն կարող։ Հայրը ինքը յաճախ մեր պաշտպանութեան կարօտ է։ Մենք կգտնենք գուցէ կեանքի մի ընկեր, որ մեր ցաւը բաժանէ և կարեկից լինել կամենայ, բայց բաժանել՝ ո՛չ բառնալ, և ո՛ր է այն ընկերը, որ ամեն ցաւ բաժանէ, ամեն ցաւի համար հաւասար զգացումն ունենայ, կամ ինքն ևս նման ցաւերի տէր, նոյնպէս բեռնաւոր և վաստակարեկ չլինի՝ անընդունակ ուրիշի բեռը իւր վերայ վերցնելու։ Միայն մէկը կայ, որ այդ անել կարող է, որ ընդհանուր մարդկութեան ցաւոտ վիճակի մէջ մտնէ, առանց ընկճուելու յօժարութեամբ իւր վերայ առած այդ ծանր բեռան ներքոյ, և նա է, որ հրաւիրում է այժմ ամէնիս հրաւիրում է յատկապէս այն բողոքներում, երբ մենք վաստակեալ ենք և բեռնաւոր, և ո՛չ մի տեղ հանդիստ չենք գտնում... Եկեք ինձ մօտ և ես կհանգստացնեմ ձեզ, ասում է Յիսուս՝ մեր Տէրը։

Սակայն որչափ հեռու է մեզնից այդ Յիսուս՝ հեռու տարածութեամբ կամ ժամանակով։ Մեզ սովորեցրել էին երբեմն, որ Նա վերեւ երկնքումն է, Աստուծոյ մօտ, բնորձր, շատ բնորձր բոլոր աստղերից՝ անմատչելի մեր մտքի և երեւակայութեան համար, մի սուրբ անուն միայն, որ ահագոգով յիշել պէտք է, հաւատալ պէտք է թէ կայ, բայց ի՛նչ է, ի՛նչ կարող է անել մեզ՝ չպէտք է հարցնել։ Եւտոյ մենք լսեցինք, որ Նա աշխարհի վերայ է եղել, մեզ նման մի մարդ, իմաստուն մարդ, որ ուրիշ իմաստունների նման իմաստալից խօսքեր է ասել, ունեցել է հեռեզնիներ, ունեցել է և հակառակորդներ, որոնք Նորան հալածել, չարչարել, մեռցրել

են—և Նա անցել գնացել է... Անցել գնացել... և մենք ուրեմն նոյնն ենք մնացել՝ անօղնական և երերուն, անկարող մեր ցաւերի ծանրութիւնը մի տեղ վայր գնելու և հանդիստ չունչ քաշելու... Բայց ահա արին է այդ, չէ՞ Նա մեզ հետ լինել, մեզ մօտ լինել խոտապաւ մինչև աշխարհի վերջը, և մօտ է... միշտ կենդանի և ներկայ, մեր Տէրն է Նա և պահապանը, որ ամեն ժամանակ պատրաստ կանգնած է, քաշելու հանելու մեզ կորստեան անդունդից, և անդորր նաւահանգիստ հասցնելու, երբ չարադէտ կեանքի ալիքներին կու գնալով՝ գէպի Նա ենք դարձնում մեր յուսալից հայեացքը և Պետրոսի հետ բացականչում. «Տէր, փրկեա՛ զիս», և միանգամայն մեր բարեկամն է Նա, մեր ամենամերձաւոր, միակ անխարդախ և բոլոր վշտերին կարեկից ընկերը, որ զթառատ սիրով և զրկարաց մեր առաջն է ելնում, երբ մենք մերժուած ենք ամէնքից ու լքեալ, անձկալից սրտով Նորան ենք զիմում, Նորա զրկի մէջ աղի արցունքով մեր վիշտը թափել և հանգիստ ու թեթեւութիւն գտնել կամենում։

Ահա ապաշխարութեան օրեր են, երբ ս. Եկեղեցին Նորա վշտակոծ կենաց վերջին օրերի յիշատակն է զարթեցնում՝ մի յիշատակ, որի մէջ ամփոփուած է Նորա ամբողջ երկրաւոր կենաց խորհուրդը, այսպիսի օրերում աւելի ևս մօտ պէտք է լինի Նա մեր սրտերին, աւելի կենդանի կերպով պէտք է զգանք մենք Նորա մխիթարիչ և հանգուցիչ ներկայութիւնը։ Բաւական է, որ մենք բոլոր հոգեով խորասուզուինք Նորա երկրաւոր կեանքի սրբազան յիշատակների մէջ, քայլ առ քայլ հեռեանք Նորան՝ հեզ և խռնարհ Մարդոյ Որդուն, որ խաչն ուսին, փշեայ պսակը գլուխը գէպի Գողգոթա է բարձրանում—որպէս զի Նա վերակենդանանայ մեզ համար, մեր առաջ ելնէ, և զգանք ու ըմբռնենք մենք թէ յիրաւի Նա միայն մեր ցաւերի բեռը վերցնել և ցանկալի հանգստութիւնը մեզ պարգևել կարող է—զգանք և ըմբռնենք նաև, թէ ինչպէ՛ս պէտք է գտնենք այդ հանգստութիւնը...

Ինչպէ՛ս... Ինքը Յիսուս, մեր Փրկիչը կամենում է սովորեցնել այդ, և սովորեցնում է ո՛չ խօսքերով միայն, ի՛նչ կարող են անել

խօսքերը, եթէ նոյն իսկ ամեն իմաստութիւն իրենց մէջ պարունակեն, մի՞թէ շատ բան շահած կլինինք, եթէ մեզ տան՝ այս ինչ այս ինչ մեր վարմունքը անմիտ կամ անիրաւացի էր, պէտք է չանէինք, անկուց յետոյ պէտք է պատժուինք և կամայ տկամայ կրենք մեր արածի հետեանքները. ցաւի պատճառն իմանալը մեր ցաւը չի թեթեւացնում, այլ աւելի ևս սաստկացնում է, եթէ հետը մէկ տեղ դարման չէ տրուած: Եւ Յիսուս տալիս է դարմանը՝ նախ տալիս է մի բան, ապա գործադրութիւնը սովորեցնում: Առէք զլուծ իմ», ասում է Նա, մինչև որ Դուք այդ լուծը չկրէք, ոչինչ չէք էլ կարող սովորել, և ձեր սովորածը ոչինչ օգնուտ, ոչինչ հանգրստութիւն ձեզ չի բերի: Նա տալիս է մի բան, և տուածը ըստ երևոյթին ակորժեցի ինչ չէ, մի ծանրութիւն, մի լուծ մեր վերայից վերցնելով Նա մեզ ուրեմն անպայման կերպով չի թեթեւացնում, այլ փոխարէնը մի նոր լուծ է դնում մեր վերայ. Նա աշխարհային հեշտութեանց ու զուարճութեանց այն գործակալներից չէ, որոնք ամեն ինչ խոստանում են, առանց որ և է բեռ դնելու. Նա դնում է մի բեռ՝ ըստ ինքեան թեթեւ, բայց մարդոց ամենամեծ մասի համար անտանելի ծանր մի բեռ, և ապա սովորեցնում, թէ ինչպէս տանենք այդ ծանրութիւնը, որպէս զի միւս բոլոր ծանրութիւններից ազատ լինինք:

Իրենից սովորել է հրաւիրում Նա մեզ, և իսկոյն բացատրում է, թէ ինչու միայն իրենից սովորել կարող ենք. «զի հեզ եմ և խոնարհ սրտիւ»... Ամեն լուծ տանելու համար հեղութիւն և խոնարհութիւն պէտք է. բայց աշխարհի մէջ ծանօթ շողմարար հեղութիւնը չէ այս, որով մարդիկ աչքերը կախ ու ձեռնամաճ կանգնում են հարուստի և զօրեղի առաջ, նորան հաճոյանալ, նորա բոլոր քմահաճոյքները զուշակել և նոցա համակերպիլ աշխատում և ոչ այն ստրկական խոնարհութիւնը, որով ընկճուում է մէկը բռնութեան լուծի կամ բաղդի անազորոյն հարուածների ներքոյ, սրտի հեղութիւն և խոնարհութիւն է այս, որպիսին Ինքը Փրկիչն ունէր՝ որով հնազանդ եղաւ Նա Իւր չոր մահոյ չափ, եւ մահու խաշիւ:— և մնաց անընկճե-

լի աշխարհի առաջ: Այդ խոնարհութեամբ է, որ Նա աղքատ ոյրի մէջ իջաւ ու խեղճերի և տառապեալների հետ կեանք անցրեց. այդ խոնարհութեամբ դիմադրեց սատանայի բոլոր փորձութիւններին, և երբ ոգևորուած ամբողջ կամենում էր ձեռքերի վերայ բարձրացնել՝ տանել Նորան թագաւոր նստեցնել, խոյս տուաւ գէպի սամայի լեռները և առանձնական աղօթքի մէջ անդորրութիւն որոնեց այդ սնտոյի ցանկութիւններից: Նոյն հեղութեամբ էր, որ Նա ամեն կշտամբանք ու նախադիմք տարաւ կոպիտ զինուորներից, բայց պատասխանի անգամ արժան չհամարեց ցօյ, ու ցնորամիտ Հերովդէս թագաւորին, այդպիսի խոնարհութեամբ և հեղութեամբ թող տուեց Իրեն իբրեւ մի ողորմելի յանցաւորի դատել, աւաղակների հետ խաչ բարձրացու և դառնութեան բաժակը մինչև յատակը քամեց, իսկ երբ՝ «Ամենայն ինչ կատարեալ է» ասաց և Իւր չոր ձեռքն աւանդեց հոգին, այնչափ ահաւոր էր այդ ձայնը և յաղթական, որ մօտիկ կանգնած հարիւրապետը, հզարա հաովմայեցին՝ ստիպուած եղաւ բացականչել. «Արդարեւ Աստուծոյ Որդի էր Սա»:

Ահա այս հեղութիւնն ու խոնարհութիւնն է, որ եթէ մենք խղճի մտօք ըմբռնենք և տեղ տանք նոցա մեր սրտի մէջ՝ անչափ քաղցր կլինի մեզ համար Փրկչի լուծը, բոլորովին թեթեւ մեր վերայ դրած բեռը, և մենք կհասկանանք՝ թէ ինչու այդ քաղցր լուծն ու թեթեւ բեռը մեզ աշխարհի լուծից և մեզ վերայ բարդուած ցաւերի բեռնից ազատել կարող են, անվրդով խաղաղութիւն և հանգիստ պարգեւել մեր անձինս:— Այս աշխարհի վերայ անհրաժեշտ է, որ մենք մի լուծ կրենք. ոչ ոք ազատ չէ առօրեայ հոգսերի, պատահական ու տեւական, ներքին ու արտաքին նեղութիւնների բեռնից, և եթէ կան այնպիսիները, որոնք երեւակայում են, թէ ազատ են կամ կարող է մի օր զալ, երբ, աւելի բաղդաւոր պայմանների մէջ զրտնուելով՝ ազատ կլինին:— Հարաշար սխալուում են և իրենք իրենց խաբում. այդ ժամանակը երբէք չի գայ և այդ բաղդաւոր պայմանները մեր երկրագունդի վերայ ոչ մի տեղ զանել կարելի չէ: Մենք կարող ենք արեւցութեան

տալ մեզ, հեշտութեան ու զուարճութիւն-
ների զիրկն ընկնել ու առժամանակ մոռանալ
մեր վշտերը, բայց երբ թմբու թիւնից արթնա-
նանք՝ կարթնանան և նոքա ու կրկին սասա-
կութեամբ զուխ կրարձրացնեն: Գուցէ կը-
յաջողի մեզ այս կամ այն արտաքին հոգ-
սի և նեղութեան բեռը մեր վերայից ձը-
գել, բայց տեղը միշտ նորերը կգան և մի
ծանրութիւն կմնայ միշտ մեր վերայ, ոչ միայն
այն, որ ամենից անտանելին է և որ ձգելու
համար ոչ մի երկրաւոր միջոց չունինք՝ մեր
սեփական զեղծումների մեր մեղքերի օր ա-
ւուր աճող ծանրութիւնը, այլ նաև արտաքին,
մեզանից անկախ պատահարներից յառաջ ե-
կած կամ մեզ շրջապատողների պատճառած
մեծ ու փոքր զրկանքների ծանրութիւնը, որ
մեր մարմնական այս տկար կազմուածքի մէջ
ամեն ոք տանել ստիպուած է՝ նոյն իսկ ամե-
նապահօյ ու զօրեղ իշխանաւորները: Այդ
բոլոր ծանրութիւնների լուծից ազատուելու
համար մի պայման կայ միայն, ասում է
Փրկիչը. հարկաւոր է միայն, որ մենք յօժա-
րինք Նորա լուծը մեր վերայ առնել, և այն
ժամանակ ճշմարիտ ազատ և հանգիստ կը-
լինինք՝ որովհետեւ ասում է, իմ լուծը քաղ-
ցրը է և իմ գրած բեռը թեթեւ է: Այդ էլ
լուծ է, այգտեղ և՛ս հպատակութեամբ ու խո-
նարհութեամբ կրելու մի բան կայ, բայց այդ
կրելիքը մենք քաղցրութեամբ ու յօժարու-
թեամբ ենք կրում, ուստի և ծանրութիւն
մեր վերայ չենք զգում:

Շատերի համար դժուար է հաւատալ այս
խօսքերի ճշմարտութեան՝ հաւատալ որ այս մեծ
խոստումը իրականութիւն դարձնել կարելի է,
մարդիկ դժուարանում են առհասարակ իրենց
ունեցածը ձգել, ձգել աչքի տակ եղած շօշա-
փելի բարիքը, որ ինչքան և դառնութիւնների
հետ կապուած լինի՝ մի քաղցրութիւն այնու-
ամենայնիւ իւր մէջ պարունակում է, հրա-
ժարման բոպէին ամբողջապէս քաղցրանում
— և խոստացած աներեւոյթ բարիքների և
տեղից ընկնել, Սակայն մեր Փրկչի խոստում-
ներն այնպէս չեն, որ միայն հեռու ապագա-
յում, հանդերձեալ կեանքի մէջ կարող են
իրականութիւն դառնել: Ով միանգամ զգացել
է այն քաղցրութիւնը, որ բարոյական անձնա-

ւորութիւնն է զգում, երբ դուրսը անյաջո-
ղութեանց հանգիստի մարդոց կողմից՝ գնա-
հատութեան և շնորհակալութեան փոխանակ,
ծաղր, նախադիմք և կշտամբանք գտնելով,
համոզուած է այնուամենայնիւ, թէ իւր
պարտքը կատարեց, ով գտնուել է մի մահա-
մերձ հիւանդի մօտ, որ կեանքի մէջ ամեն
տեսակ ցաւեր ու դառնութիւնների տանելուց
յետոյ՝ անվրդով հանգստութեամբ և հրեշ-
տակային զուարթութեամբ տանում է նաև
վերջին ամենածանր ցաւը, «խիղճս հանգիստ
է» ասելով՝ նա պէտք է ընդունակ լինի ըմբռ-
նելու, թէ յիրաւի կայ մի միջոց, որով մենք
մեր այս թշուառ ու տագնապայից կեանքում
ևս անդորր հանգստութիւն գտնել կարող
ենք, և ոչ մի լուծ, ոչ մի ծանրութիւն չզգալ
մեր վերայ: Այդ միջոցը այն քաղցր լուծն է, որ
ամենից առաջ ինքը մեր Փրկիչը իւր վերայ
կրելով՝ կեանքի ամեն հանգամանքներում հար-
ցնում էր նախ թէ ի՞նչ է իւր Նրկնաւոր
Հօր կամքը, և այն, այն միայն էր կատարում,
փորձութեան ամենահաւոր բոպէներում ան-
գամ՝ «բայց ոչ իմ կամք, այլ Բոյգ լիցին»
ասում էր, և յաղթանակում փորձութիւն-
ների վշտերի ու մահուան վերայ:

Բարոյական պարտականութեանց այն քաղցր
ու սրբազան լուծն է այդ, որ եթէ մենք իբրև
մեր Փրկչի ճշմարիտ հեռեւորներ մեր վերայ
առնենք և այդպիսով ամեն ուրախութիւն և
նեղութիւն իբրև մեր Նրկնաւոր Հօր կողմից
եկած նկատենք՝ Նորա սուրբ կամքին հնա-
զանդ միշտ և պատրաստ այդ բարի կամքը
կատարելու, չարի ու փորձութեան դէմ մա-
քառելու — ոչ արհաւիրք յարտաքուստ և ոչ
տագնապք ի ներքուստ մեզ ընկճել և մեր
խաղաղութիւնը տեւական կերպով մեզնից խլել
կարող են, Հարկաւ այդ դէպքում ևս ժա-
մեր կլինեն և օրեր, երբ արտամութիւն ու
անձկութիւն մեզ կպատեն՝ մարմնական և
հոգեկան ցաւերի ճնշումից մենք այգտեղ ևս
ընդմիշտ ազատ չենք լինի — ինքն Աստուծոյ
ամենօրհնեալ Որդին, որ իւր բարեկամ Ղա-
զարոսի մահը լսելով արտասուեց և Գեթսե-
մանի պարտիզում, իւր համար պատրաստած
մահուան պատկերի առաջ, տագնապում էր՝
տղտո չմնաց նոցանից, սակայն կենդանի է

Նա, որ իւր քաղցր լուծով մեզ կրկին անգամ դէպի ցանկալի հանդիսաւ վերադարձնել կարող է՝ սփռփել և հանդուցանել. Նորա՝ մեր Փրկչի մեր հանգուցչի գիրկը գիմենք ամեն անգամ, երբ տաղնապի և անձկութեան մէջ ենք. եթէ ամէնքը մեզ խարեն և լքանեն, եթէ երկրագունդն իսկ սահի մեր ոտքի տակից՝ Նա անտուտ է, Նա հաստատուն և Նա կանչում է մեզ. «եկայք ... եկայք առիա ...»



Ս. ՆԵՐՍԵՍ ԸՆՈՐՀԱԼԻ

և

ՆՈՐԱ

„ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻՒՆՔՆԵՐԻ ԵՂԵՐԵՐԻՊՈՒԹԻՒՆԸ“

Ներսէս, որ Շնորհալի է կոչուել զեղեցիկ խօսելուն և Նյայցի՝ Հոռովայ դղեակը աթոռանիստ ունենալուն համար, Ապիրատ անունով հայ իշխանի կրտսեր որդին էր՝ 1102 թ.-ին ծնուած։ Մօր կողմից նա սերունդ էր Հայոց բարձր ազնուականութեան ամենանշանաւոր տոհմի՝ Պաշլաւունեաց իշխանական տան, որ իւր ծագումը հասցնում էր մինչև Արշակունեաց հին արքայական տունը և ս. Դրիգոր Լուսաւորչին ևս իւր հայրերի ցանկի մէջ հաշուում։ Ներսէսի անմիջական նախնեաց օրով ամենից աչքի ընկնող ներկայացուցիչն այդ տոհմի էր Դրիգոր Մաղխարոս, որ հաջակուած էր թէ իբրեւ պետական անձն և թէ իբրեւ մասնադիր։ Նա մեռաւ 1058 թ.-ին, երբ Միջագետքի կառավարչապետն էր՝ Յունաց կողմից կարգուած։ Բացի շատ աղջիկներից նա թողեց նաև 4 որդի, որոնցից մեծը՝ Վահրամ, 1065 թ.-ին կաթողիկոսանալով՝ Դրիգոր Բ. անունով ս. Լուսաւորչի աթոռը բարձրացաւ, որի վերայ մնաց մինչև 1105 թ.-ը՝ իւր մահը։ Սա առանձին սէր ունէր վկայարանութիւնների համար, ինքը բազմաթիւ վկայարանութիւններ յունարէնից և ասորերէնից հայերէն է թարգմանել և առ հասարակ ամեն կերպ նպաստել է վարուց սրբոց զբաղմունքի և ծաղկելուն իւր աթոռի շուրջը. այդ

պատճառով և Վկայասէր պատուանունն է ստացել։ Նորա քոյրերից կամ Դրիգոր Մաղխարոսի աղջիկներից մէկը, որի անունը ինչպէս և իւր ամուսնունը, պատմութեան մէջ չէ պահուած՝ Ապիրատ իշխանի Ներսէսի հօր մայրն էր։ Անձանօթ է նոյնպէս Ներսէսի մօր անունը։

Ապիրատ ունէր 4 որդի՝ Բարսեղ, Շահան, Դրիգոր և Ներսէս։ Երկու կրտսերները՝ Դրիգոր և Ներսէս, եկեղեցական կոչման էին նուիրուած և դուրս համապատասխան կրթութիւն էին ստանում իրենց մեծ-մօրեղբոր՝ Դրիգոր Բ. կաթողիկոսի ձեռքի տակ։ Մահուան անկողնում Դրիգոր Բ. յանձնեց երկու մանուկների կրթութեան հոգսը, զեռ կենդանութեան ժամանակ իրեն յաջօրդ կարգուած։ Բարսեղին, որ նոյնպէս ազգակից էր Պաշլաւունիների իշխանական տան՝ լինելով Վկայասիրի կրտսեր քրոջ որդին, Բարսեղը իշխանազունների դաստիարակիչ նշանակեց Կարմիր վանքի հոգաւոր Ստեփաննոս վարդապետին։ Ինքը Բարսեղ կաթողիկոսը վախճանուեցաւ 1113 թ.-ին և նորա յաջորդն եղաւ աւագագոյնը երկու եղբայրներից՝ Դրիգոր։ Նա իշխանութիւն վարեց Դրիգոր Գ. անունով 1113 թ. ից մինչև 1166 թ.-ը։ Կաթողիկոս լինելուց մի քանի տարի յետոյ Դրիգոր իւր կրտսեր եղբայր Ներսէսին քահանայ ձեռնադրեց։ Չեռնադրութեան տարին դժուար է հաստատուն կերպով որոշել, բայց յամենայն դէպս 1121 թ.-ին Ներսէս արդէն քահանայ էր, որովհետեւ իւր առաջին բանաստեղծական երկի մէջ, որ այդ թուականից է, նա իրեն իբրեւ քահանայ է ներկայացնում։* Աւելի դժուար է այն տարին որոշել, երբ Ներսէս եպիսկոպոս ձեռնադրուեցաւ։** Հաստատ է միայն, որ 1139 թ.-ին նա ունէր արդէն եպիսկոպոսական աստիճան, որովհետեւ այդ տարին նա իբրեւ եպիսկոպոս իւր կաթողիկոս եղբոր շքախմբի մէջ էր՝ Անտիոքի լատինական ժողովում։***

* Տես Հ. Դ. Ալիշան. — Շնորհալի և պարագայ յայտնի մեկնելով 1873, եր. 58

** Նոյն եր. 109.

*** Նոյն եր. 148.